ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Պ-609²-01.06.2023-ԱոՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասություններով.

<<Սույն կետով սահմանված կարգավորումները չեն տարածվում առողջապահական՝ համայնքային ոչ առեւտրային կազմակերպություններում բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող բժշկական հաստատությունների վրա: Առողջապահական համայնքային ենթակայության բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպության ղեկավարին՝ համայնքի ղեկավարը նշանակում է <<Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին>> օրենքին և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերին համապատասխան:>>:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Պ-609²-01.06.2023-ԱոՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասություններով.

<<Սույն կետով սահմանված կարգավորումները չեն տարածվում առողջապահական՝ համայնքային ոչ առեւտրային կազմակերպություններում բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող բժշկական հաստատություններին վրա: Առողջապահական համայնքային ենթակայության բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպության ղեկավարին՝ համայնքի ղեկավարը նշանակում է <<Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին>> օրենքին և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերին համապատասխան:>>:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<<Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին>> օրենքում լրացում կատարելու մասին>> (*Պ-609-01.06.2023-ԱոՀ-011/0)*, <<Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Պ-609[1]-01.06.2023-ԱոՀ-011/0)* և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքում լրացում կատարելու մասին>> (*Պ-609[2]-01.06.2023-ԱոՀ-011/0)* օրենքների նախագծերի փաթեթի ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
Նարեկ Զեյնալյան	«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (*Պ-609[1]-01.06.2023-ԱոՀ-011/0)* ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ	Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող 32-րդ հոդվածի 3-րդ մասում <<չորս>> բառը փոխարինել <<հինգ>> բառով, իսկ <<Երեք>> բառը՝ <<չորս>> բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (*Պ-609[1]-01.06.2023-ԱոՀ-011/0)* ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ	Նախագծի ամբողջ տեքստում «բաժնեմաս ունեցող» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև համայնքային» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (*Պ-609[1]-01.06.2023-ԱոՀ-011/0)* ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ	Նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող 5-րդ գլխի 32-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում «քաղաքացին» բառից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետության» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ	Նախագծի 2-րդ հոդվածում՝ «ընդունվում է» բառերը փոխարինել «ընդունվում են» բառերով, իսկ «երեքամսյա» բառը	Ընդունվել է:	Ընդունվել է:

	ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (*Պ-609[1]-01.06.2023-ԱոՀ-011/0)* ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ	փոխարինել «եռամսյա» բառով:		
ՀՀ կառավարություն	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքում լրացում կատարելու մասին>> (*Պ-609[2]-01.06.2023-ԱոՀ-011/0)* օրենքների նախագիծ	Նախագծի 1-ի հոդվածում՝ «հաստատություններին» բառը փոխարինել «հաստատությունների» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքում լրացում կատարելու մասին>> (*Պ-609[2]-01.06.2023-ԱոՀ-011/0)* օրենքների նախագիծ	Նախագծի 1-ին հոդվածում լրացվող նախադասությունները միացնել՝ գրելով հաջորդաբար: Այլապես, լրացվող նախադասությունները նման են պարբերությունների և այս տեսքով ընդունվելու դեպքում իրավական ակտի ինկորպորացիայի ժամանակ կառաջանան խնդիրներ:	Ընդունվել է:	Ընդունվել է: